

# ԱՐԺԱԼՈՅՄ ՄԻՒԹԱՐԵԱՆ

Թիֆլիսի մօտակայ Ծղնիթ գիւռում, 70 տարեկան հասակում, վախճանուեց Արշալոյս Միխթարեանը<sup>(\*)</sup>:

Այդ համեստ անունը սերտ կերպով կապուած է 90-ական թուականների հետ: Դա այն շրջանն էր, երբ մեզանում սկսուել էր գրական — կուլտուրական մի նոր շարժում, երբ առաջ էր եկել նոր, երիտասարդ գրողների մի նոր բանակ, որոնք համախմբուելով գլխաւորապէս «Մուրճ» ամսագրի դրօշի տակ, ձգտում էին զարկ տալ ինքնուրոյն գրականութեանը, նոր երգ, նոր ուղղութիւն մտցնել բանաստեղծութեան մէջ եւ, որ գլխաւորն է, տարածել ժողովրդի մէջ լուսաւորութիւն գիտութեան եւ գրականութեան միջոցով:

Յովհ. Յովհաննիսեան, Ալէքսանդրը Մատուրեան, Յովհաննէս Թումանեան, Լեռենց, Լեւոն Մանուէլեան, Աւ. Խոսհակեան եւ ուրիշներ իրենց քրնարական, լիրիկական թարմ եւ նոր երգերով հետզհետէ գրաւում էին հասարակութեան ուշադրութիւնը:

«Մուրճ»ի դրօշի տակ հանդէս եկաւ նաեւ Արշալոյս Միխթարեանը եւ իր վրձինի աջող էսկիզներով, էտիւդներով եւ իր արծարծած թէմաներով շուտով գրաւեց ընթերցողների ուշագրութիւնը:

(\*) Մնաւել է Ալէքսանդրապօլում 1861 քուին: Ռւսել ներսիսեան դպրոցում, Պետրովորդի պատմական-լեզուաբանական ֆակուլտետում 3 տարի, որպէս ազգու ուսիկիդիր:

Իր հասարակական գործունէութեան ընթացքում աշխատել է նա երեք տարրեր Փրօնտում, երեք տարրեր գըծով, յայտնաբերել է երեք հիմնական եւ բնորոշ առանձնայատկութիւն:

Բանաստեղծ, մանկավարժ, գիւղատնտես: Ահա այն ուղին, որ անցել է նա անվիկանող տոկունութեամբ իր ամրող կեանքի ընթացքում:

Սակայն ի՞նչ է կերտել, ի՞նչ է կառուցել, որո՞նք են նրա յօրինած նկարները, ի՞նչ լօգունգներ են գրուած նրա դրօշի վրայ, ո՞ւմ է ծառայեցրել իր գըրիչը:

Այս կարեւոր, հիմնական մօմէնտները պարզելու համար՝ յիշատակենք նրա թողած գրական վաւերագրերը:

## ՄԻՒԹԱՐԵԱՆՆ ԻԲՐԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ

1890 թիւ: Ահա այն թուականը, որ Միխթարեանն առաջին անգամ գրական ասպարէզ է եկել: Թերթեցէք «Մուրճ» ամսագրի էջերը եւ գուք այնուեղ կը գտնէք նրա գրական նկարները, կը ծանօթանաք նրա հասարակական մտումների, աշխարհայեցքի, լիրիքական ապրումների եւ յոյզերի հետ:

Ճիշդ է, այդ բանաստեղծութիւնները մինչեւ օրս էլ չեն հրատարակուած առանձին գրքով, չեն դարձած լայն հասարակութեան սեփականութիւնը, նրանք զարդարում են միայն «Մուրճ» հանդիսի էջերը, սակայն ամէն անգամ «Մուրճ»ը թերթելիս, այդ եր-

գերը գրաւում են ձեր ուշադրութիւնը .  
դեռ այսօր էլ նրանցից շատերը չեն  
կորցրել իրենց արժէքը եւ կարդացւում  
են առանձին հետաքրքրութեամբ : Դեռ  
այսօր էլ նրանք յուզում են ձեզ, աղ-  
դում ձեր սրտի վրայ, մտածել տալիս :  
Զգում էք, որ դրանց հեղինակն օժար-  
ւած է բանաստեղծական ձիրքով, գի-  
տէ վառ գոյներով նկարել, բնոյթագրել  
իրական կեանքի տարրեր էջերը :

Սակայն ո՞րն է Միսիթարեանի ըս-  
տեղծագործութիւնների գլխաւոր մօ-  
դիւր, հասարակական ո՞ր միջավայրն է  
երգել :

Նրա երգերի մէջ գերակշռող մօ-  
դիւր հասարակական խնդիրներն են,  
իսկ ստեղծագործութեան գլխաւոր մի-  
ջավայրը գիւղն է, գիւղական աշխարհը  
գիւղի ժողովուրդը : Դուք տեսնում էք  
նրան գլխաւորապէս գիւղի կուլտուրա-  
կան Փրօնտում : Նրա պայքարը գիւղի  
յետամնացութեան, անդրագիտութեան  
եւ միաժամանակ շահագործումների  
դէմ է :

«Երկու նանապարհ»ը նրա գիւղա-  
կան աջող նկարներից մէկն է, որը պար-  
զում է միաժամանակ նրա ստեղծագոր-  
ծութեան ուղին եւ աշխարհայեացքը :  
Համալսարանական երկու ուսանողների  
կեանքի ամբողջական պատկերն է դա :  
Նրանք համալսարանը՝ վերջացնելուց  
յետոյ գործում են երկու տարրեր գծով .  
մէկը մեկնում է դէպ ի գիւղ, իսկ միւ-  
սը մնում քաղաքում : Մէկը նուիրում  
է գիւղի ժողովրդի լուսաւորութեան,  
կուլտուրական յեղափոխութեան գոր-  
ծին, կառուցում է գպրոց, օգնում թըշ-  
ուառներին, իսկ միւսը, քաղաքի սօցի-  
ալական աննպաստ հանգամանքների  
ներքոյ, նետում է տնտեսական ասպա-  
րէզը եւ հետզհետէ հարստահարում,  
կեղեքում :

Ահա ձեզ մի քանի հասուածներ .

... Անցան այդ օրեր : Մենք ուրախ – ուրախ  
Հեռու հայրենիք գարձանի միասին .

... Երդուեցանի սիրել ամբողջ մարդկութիւն,  
Սիրել ամէն ազգ, կըքօն ու լեզու,  
Համարել եղբայր մեզ ամէն մարդու :  
Երդուեցանի պաշտել խեղճին, քշուափն,  
Ամոնի ցաւեր, սրբել արտասուլ,  
Սեղմել կրծքերիս հալածեալներին,  
Լինել միշտ նոցա անյողդողդ նեցուկ ....



Այդ օրից ահա մենք բաժանուեցանիք .

Նա մընաց Տիֆլիս, ես քողի խսկոյն  
Այդ ուրախ կեանիքի, վայելքի բաղաք  
Եւ ըշտապեցի մի հեռու անկիւն,  
Դէպ ի աննըշան, կորած, մոռացուած  
Մի փոքրիկ աւան, որ քանի էր սակայն  
Ինձ համար, որպէս ծանօթ ու սիրուն  
Օրօրոց վաղուց անցած մարդկութեան :  
Եւ ապրում եմ ես այնոնք մինչ այսօր ...  
Ապրում եմ անվիշտ, խաղաղ, բաղդաւոր՝  
Կին ու զաւակի սիրող շրջանում ,  
Շինականների միշտ բաց տըներում .

Ապրում եմ նոցա եկեղեցու մէջ,  
Իմ ձեռակերտած ուսումնարանում,  
Աշակերտներիս զրւարք հազու մէջ,  
Դիւղացիների անկեղծ սրտերում .  
Ապրում եմ իհւանդ ու տառապեալի  
Անկողնի առաջ նստած ժամերով  
Եւ անօգնական խեղճ կարօնեալի  
Յարկի տակ՝ նորա վիշտն ըսփոփելով ,  
Ապրում եմ ծերի, երիտասարդի  
Դագաղի մօտին տըխուր կանգ առած  
Եւ ուրախ խննոյք ու հարսանիքի  
Սեղանի վերայ ժպտադէմ նստած .  
Ա՛հ, ապրում եմ ես լայնարձակ դաշտում,  
Թառուտ անտափ զով ըստուերի տակ,  
Ուր անտես քոչուն ծառի նիւղերում  
Խոր գարնանային հնչում է նրւազ .  
Ապրում եմ առուի կանաչ ափերին,  
Քաղցրը տաղերում նորա կարկաչի ,

Եւ ոսկեգանգուր արտերի միջին,  
Մաղիկների մէջ հոտով մարգերի:

**Այսպիսի յաջող երդերի շարքում**  
**ուրոյն տեղ են գրաւում «Ուսուցիչ»,**  
**«Ողջո՞յն ձեզ», «Հնաւոր», «Փարնանա-**  
**յին առաւօտ»: Մրանք դիւղի պատկեր-**

**Այդ տեսակէտից բնորոշ են նաև**  
**նրա արձակ պատմուածքները, որոնք**  
**տպուած են «Մշակում»: Այդտեղ էլ**  
**դիւղն է պատկերանում ձեր առաջ: Դար-**  
**ձեալ դիւղի լուսաւորութեան ֆրոնտն**  
**է, հերոսները դիւղի ուսուցիչներն են,**  
**նրանց ընտանիքի անդամները: Այդ**



ԱՐԵՎԱԼՈՅՈ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ներից են, դիւղական պէյզաժներ, է-  
տիւդներ: Ճիշդ է, նո չի կարողացել  
տալ դիւղի սօցիալական պատկերը,  
բայց դուք ծանօթանալով զանազան  
ժամանակ դրուած այդ երդերի հետ,  
տեսնում էք ինչպէս աստիճանաբար պօ-  
էտի լեզուն գաւնում է սահուն, ներ-  
կերն աւելի զունեղ, երդեր՝ որոնք ցոյց  
են տալիս նրա դիտելու, քննադատելու  
և նկարելու ձիրքը:

պատմուածքների մէջ ուրոյն տեղ է գը-  
րաւում «Բարեկենդանի խեղկատակնե-  
րը», որ տպուած է 1903 թուին «Մշա-  
կում» (թիւ 34): Մեռած ուսուցչի ըն-  
տանիքի պատկերն է դա: Յետին չքաւո-  
րութեան մէջ, թշուառութեան գրկում  
տպրում է այդ ընտանիքը: Ծայրայեղ  
չքաւորութեան, թշուառութեան մօ-  
մէնտները նկարուած են վարպետ վրձի-  
նով: Թէ ինչից է առաջացել այդ չքա-

որութիւնը, ո՞վ է մեղաւորը, Մխիթարեանը չի տալիս սօցիալական երեւոյթների պատճառները, այլ սոսկ արձանագրում է փաստերը, դէպքերը, երեւոյթները։ Այդ յուզիչ պատմուածքը կարդացւում է հետաքրքրութեամբ՝ չնորհիւ գծագրուած կենդանի պատկերների։

Այդ շրջանին է պատկանում նաև նրա մի փոքրիկ էտիւդը, որ տպուել է «Մշակ»ում (1906 թիւ 51)։

«Փոքրիկ զանգակը»։ Դա գիւղի գպրոցի պատկերն է։ Այնտեղ հանդէս են գալիս գիւղի ուսուցիչները, ուսանողները։ Առանձնապէս աջող են աղքատ ուսուցչի եւ ուսանողի տիպերը։ Մի փոքրիկ զանգակ չարժման մէջ է զնում ամբողջ գպրոցը։ Նրա քաղցր, դիւրեկան հնչիւնի տակ սկսում են գասերը։ Բայց ահա ձարական ոէտակցիան փակում է գպրոցը եւ լուսմ է ընդմիշտ զանգակի ձայնը։

Սակայն, Արշալոյս Մխիթարեանի գրականութեան մէջ կենտրոնական տեղ է գրաւում «Թէպ ի Արարատ» գրքոյիլը։ Դա 1903 թուի օգոստոս 14ին Արարատ բարձրացող արշաւախմբի ճանապարհորդութեան ամփոփ պատկերն է։ Այդ խմբի մէջ էին Ա. Մխիթարեան, լեհացի բուսաբան Տրինքեցկին, Մոսկուայի տեխնիքական ուսումնարանի ուսանող Գարեգին Սարգսեան, Ա. Եւանդուլեան, բժշկուհի էքիդ — Տրիմը, ինժինէր Դաւիդովսկիին, բժիշկ Շարէյլսկիրը։

Մի կրակ ոգեւորել էր միջազգային այդ խմբին։ բարձրանալ Արարատի գագաթը, գիտել նրա ձիւնածածկ կատարը, նրա քարաժայուերը, քարափները, անդնդախոր հովիտները, ձորերը, քչքչան գետակները։

Արշաւախմբի բոլոր անդամները

չկարողացոն մինչեւ կատարը բարձրանալ, նրանք կանգ տան կէս ճանապարհին։ Մինչեւ ձիւնածածկ գագաթը հասան միայն Ա. Մխիթարեանը, բժիշկ Շարէյլսկը և ինժինէր Դաւիդովսկիին։ Ահա այդ վերելքի, ճանապարհորդութեան նկարագրութիւնն է տալիս Ա. Մխիթարեանը։ Գրքոյիկում կան վարպետորէն գծագրուած աջող պատկերներ, որոնք կարող են հայ գեղարուեստական գրականութեան մէջ տեղ գրաւել։ Եւ ի դուր չէ, որ այդ գրքից որոշ հատուածներ տպագրուած են դպրոցական դասագրքերում։

Ա. Մխիթարեանն իբրեւ մանկավարժ։ — Ա. Մխիթարեան երկար տարիներ, իբրեւ ուսուցիչ եւ տեսուչ, պաշտօնավարել է զանգան հայկական գպրոցներում։ Նրա մանկավարժական գործունէութեան գլխաւոր կենտրոնները հանդիսացել են՝ Լենինական, Գանձակ, Ախալքալաք, Սաղիսանի եւ Թիֆլիս։ Ակսել է 1879 թուից եւ տեսել է մինչեւ 1900 թուականը, իր այդ լաւ գործունէութիւնը։ Գլխաւորապէս աւանդել է նա Հայոց լեզու եւ հայ գրականութիւն։ Նրա ուսանողներից շատերը մինչեւ այսօր էլ առանձին սիրով յիշում են նրա արդիւնաւէտ դասաւանդութիւնները։

Իբրեւ գիւղատնտես։ — Ա. Մխիթարեանը յայտնի է նաև իբրեւ գիւղատնտես։ 1879 թուին հիմնում է նա օրինակելի մեղուանոց, ուր ցանկացողները սովորում են ուցինալ մեղուարուծութիւն։ Լենինականում, Ղարաքիլիսայում, Համամլիում եւ Ախալքալաքում հիմնում է ամառնային երկամսեայ կուրսեր եւ դասախոսութիւններ, նորագոյն մեղուարուծութեան մասին։ Նոյնպէս Անգրկովկասում մեղուապահական գիտութեան նորագոյն ձեւերի

տարածմանը դարկ տալու նպատակով թարգմանում է եւ կովկասեան շերամապահական կայարանի օժանդակութեամբ հրատարակում է Եղուարդ Բերտրանի «Մեղուների խնամատարութիւնը» զրուածքը, որ մինչեւ այսօր էլ ծառայում է իբրեւ ձեռնարկ հայ մեղուապահների համար:

Յիշատակենք եւ այն որ Մխիթարեանը եօթ տարի շարունակ (1914-920) վարել է Հայոց Գիւղատնտեսական Բնկերութեան քարտուղարի պաշտօնը: Նոյնպէս թարգմանել եւ հրատարակել է գիւղատնտեսութեան այլ ճիւղերի վերաբերեալ, կաթնատնտեսական, երկրագործական, անասնապահական եւ այլ հանրամատչելի գրքեր եւ այդպի-


սով հարստացրել հայ գիւղատնտեսական զրականութիւնը:

Ահա այն գերը, որ կատարել է Մըլիթարեանը իրրեւ զրականագէտ, մանկավարժ եւ գիւղատնտես: Անկատկած, նա հանդիսացել է իր ժամանակի կուլտուրական դէմքերից մին, բայց իր համեստ բնաւորութեան պատճառով՝ մնացել է յետին պլանի վրայ:

Ժամանակն է, որ նրա աջող երգերը, պատմուածքները եւ ճանապարհորդական էջերը առանձին գրքոյկով հրատարակուին:

Դա էլ կը լինի լուսագոյն արձանը նրա թարմ հողակոյտի վրայ:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ  
Թիֆլիս 26 օգոստ. 1931



## ԱՐԵՒԻԿԱՆ ՀԵՏ

Կ'իյնայ դիւթանին արեւին, կը համբուրէ նակատէս.  
Կը բեկրեկի, կը շոյէ, յետոյ մարմնիս կը փարի,  
Սիրոյ նրման ջերմագին ու գրթութեան պէս բարի:  
Պատուհանէս ներս խոնարի, ծաղիկներու փունջի պէս,  
Երջանկացած իր այցէն՝ «արե՛ւ, արե՛ւ» կը մընչեմ,  
«Թափէ՛ տարփանիքը թաւիշ, լեցո՛ւր սենեակս հեզասեմ,  
Զի ես ծարաւ եմ շողիդ, շառայլներուդ ոսկեղէն,  
Ես՝ ցըրտահար ու հիւանդ՝ կեանիքի դաժան քամիէն:

«Մայրամուտը քող, արե՛ւ, ֆիչ մը, ֆիչ մը երկարի,  
Ու քող հոսի գեռ այսպէս երջանկութիւնն ըղձալի  
Համբոյրներուդ ջերմութեան, մինչեւ սառո՛յցը հալի:

«Արե՛ւ, զիսե՞ս, երբ մեկնիս, պիտի խուցըս խաւարի,  
Ու շուրջս ամէն բան մըսի...զի մինակդ ես, ոզի՛, դուն,  
Որ սեմէս ներս կը բերես ֆիչ մը լոյս ու ջերմութիւն»:

ՍԱՐԳԻՍ ՄԵՀԵԱՆ

1931 Պրումմանա